

## Կարծիք

Նարինե Ստեփանի Մելքոնյանի «Հայերենի հոլովական իմաստների համարժեքները իսպաներենում» թեկնածուական ատենախոսության մասին

Ընդհանուր և համեմատական լեզվաբանության առաջնահերթ խնդիրներից է համեմատական մեթոդի տարբեր եղանակներով վեր հանել ինչպես ցեղակից, այնպես էլ ցեղակցական կապեր չունեցող լեզուների քերականական կառուցվածքի ընդհանրություններն ու տարբերությունները և գուցադրվող լեզուների շրջանակներում մեկնաբանել դրանց յուրահատկությունները:

Նմանատիպ աշխատանքների գիտական արժեքն ընդգծվում է այն հանգամանքով, որ լեզվական իրակությունների գուցադրական քննությունը չի սահմանափակվում երևույթների պարզ նկարագրությամբ, այլ կատարվում է վիճակագրական ուսումնասիրություն՝ պարզելու գուցադրական հիմունքի ծավալային դրսևորումները դիտարկվող լեզուներում, այնուհետև կատարվում է գուցադրական մեկնաբանություն, որի տվյալների հիման վրա կատարվում է տիպաբանական բնութագրություն:

Ահա այդպիսի աշխատանք է ներկայացված հրապարակային պաշտպանության, որ կատարել է հայցորդ Նարինե Ստեփանի Մելքոնյանը՝ մասնագիտական խորհրդի դատին հանձնելով «Հայերենի հոլովական իմաստների համարժեքները իսպաներենում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը:

Սույն աշխատանքը ժամանակակից հայերենի և իսպաներենի հոլովական համակարգերի գուցադրական ուսումնասիրության հաջողված փորձ է. ատենախոսը գուցադրության եզրեր է ընտրել այնպիսի լեզուներ, որոնցից յուրաքանչյուրը քերականական իմաստներն արտահայտում են տարբեր լեզվական միջոցներով. հայերենը՝ կցականությամբ, իսպաներենը՝ վերլուծական եղանակով:

Ատենախոսը հետազոտության հայեցակետ է ընտրել երկու լեզուների հոլովական համակարգերի *համաժամանակյա* քննությունը՝ գործադրելով մասնավորապես *համաժամանակյա նկարագրության* և *համաժամանակյա գուցադրության լեզվաբանական մեթոդները*:



Անշուշտ, այսպիսի հետազոտություն կատարելու համար պետք է ունենալ *հայեցակարգային հիմք*. ատենախոսը հենվել է հիմնականում հայերենագիտական և իսպաներենագիտական աշխատությունների վրա՝ որոնք նվիրված են հոլովի քերականական կարգի, նախդիրների արտահայտած հոլովական իմաստների, դրանց բնութագրման ու դասակարգման հիմնախնդիրներին:

Հետազոտության իր սկզբունքը պարզելու նպատակով ատենախոսը վկայում է լեզուների նմանությունների ու տարբերությունների որոշման հարցում լեզվաբանության մեջ առկա սկզբունքները՝ իմաստային, ձևային և իմաստաձևային (գուցե՝ ձևաիմաստային), ապա ընտրում է երրորդ սկզբունքը՝ «բովանդակություն – ձև» ուղին:

Հետազոտության տեսական ու գործնական արժեքը պայմանավորված է այն հանգամանքով, որ սերտորեն առնչվում է *թարգմանության տեսությանը*՝ իր նպաստը բերելով հայերեն–իսպաներեն (ինչպես նաև իսպաներեն–հայերեն) թարգմանական աշխատանքները որոշ չափով դյուրին դարձնելուն, ինչպես նաև տեսական դրույթներ ապահովելով թարգմանության տեսության համար:

Ատենախոսի նպատակն է՝ ներկայացնել հայերենի հոլովական իմաստների համարժեքներն իսպաներենում, մեկնաբանել զուգադրվող լեզուներում բառահարաբերության հետևանքով առաջացած նմանություններն ու տարբերությունները, գաղափար սրալ շարահյուսական տարբեր կիրառություններում հոլովների արտահայտած իմաստների և այդ հոլովների իմաստային ընդգրկման ծավալների մասին և այլն:

Ըստ հարցադրումների ընդհանուր դրվածքի՝ սույն ատենախոսությունը *տիպաբանական բնույթի է* և սահմանափակվում է երկու լեզուների զուգադրական բնութայամբ, որի ընթացքում զուգադրության ելակետ է ընտրվել հայերենը՝ հոլովների և հոլովական կապակցությունների առաջնային իմաստներով ու գործառույթներով (նախապատվություն է տրվել յոթ հոլովի տեսությանը՝ որպես հոլովի քերականական իմաստների արտահայտման առավել ամբողջական համակարգի):



Ատենախոս Նարինե Մելքոնյանը առաջադիր խնդիրները փորձել է լուծել  
աւտենախոսության երեք գլուխներում, որոնք աչքի են ընկնում փաստական նյութի  
առատությամբ, վերլուծության գիտական խորությամբ, համոզիչ հետևություններով  
և շարադրանքի պատշաճ լեզվով:

Ատենախոսն աշխատանքի համապատասխան բաժնում տալիս է հոլովի  
քերականական կարգի ընդհանուր լեզվաբանական և հայերենագիտական մեկնաբա-  
նությունները՝ աչքի առաջ ունենալով հոլովների ցանկացած հարցի քննության  
համար ելակետային համարվող հարացույցի և շարակարգի հիմնադրույթները:

Ըստ այդմ, հանգամանակից ներկայացվում են հոլովի քերականական կարգի  
մասին Օ. Եսպերսենի, Լ. Ելմսկի, Ե. Կուրիլովիչի, Ռ. Յակոբսոնի, Չ. Ֆիլմորի, Ս.  
Կացնելսոնի տեսակետները, որոնք փորձել են դուրս բերել հոլովների  
ընդհանրական իմաստները՝ անփոփոխակները՝ հոլովի քերականական կարգում  
դրանք համարելով առաջնային իրողություններ:

Այնուհետև հանգամանորեն տրվում են հոլովի սահմանման, հոլովների  
դասակարգման և հայ լեզվաբանության մեջ հոլովների քանակի վերաբերյալ  
ընդունված տեսությունները:

Աշխատանքի բուն շարադրանքն սկսվում է երկրորդ գլխից, որտեղ քննվում են  
հոլովական ու կապական համակարգերը ժամանակակից հայերենում և դրանց  
համարժեք կառույցներն իսպաներենում:

Դիտարկվում են ժամանակակից հայերենի հոլովների, կապական կապակցու-  
թյունների և իսպաներենի նախդիրների ու նախդրավոր կապակցությունների  
վերաբերյալ ըմբռնումներն ու տեսակետները, տրվում է հոլովների իմաստային  
դաշտերի նկարագրությունը, ի մի են բերվում հոլովների գլխավոր և երկրորդական  
կիրառությունները, քննվում են կապական կապակցությունների գործառույթի,  
նախադասության մեջ ունեցած դերի, ինչպես նաև կապերի իմաստային  
դասակարգման հարցերը, անդրադարձ է կատարվում իսպաներենի նախդիրներին  
ու նախդրավոր կապակցություններին, որոնք, ինչպես նշեցինք, բնութագրվում են  
հայերենի հոլովական իմաստների համարժեքության տեսանկյունից:

Ատենախոսության էական մասն է կազմում *հայերենի հոլովների և  
իսպաներենում նրանց համարժեք ձևերի քննությունը*. այստեղ դիտարկվում է ոչ



միայն հարացույց-շարակարգ համադրությունը, այլև հոլովների կախյալ և անկախ դրսևորումների համակարգը՝ ըստ բացարձակության և սահմանափակության հատկանիշների: Ատենախոսը որդեգրել է հետազոտության ճշգրիտ սկզբունք, որ պահպանվում է ամբողջ շարադրանքի ընթացքում. նա զուգադրական քննության արդյունքները ներկայացվում են երկու լեզուների համակարգերով՝ ելենելով զուգադրվող լեզուների փաստական նյութից:

Մենք կարևորում ենք այն հանգամանքը, որ ատենախոսը յուրաքանչյուր ենթաբաժնում ուսումնասիրած նյութը ներկայացնում է նաև ամփոփիչ աղյուսակի տեսքով: Նա հաջողությամբ կիրառել է զուգադրական մեթոդի եղանակները և պարզել, որ հայրենի որոշակի հոլովաձևերով արտահայտվում են 32 իմաստ, որոնց համարժեքներն իսպաներենում դրսևորվում են՝ ա) պարզ նախդրավոր կառույցներով ( 53%), բ) պարզ նախդրավոր և աննախդիր կառույցներով ( 22%), գ) պարզ ու բարդ նախդրավոր դարձվածքներով կազմված կառույցներով (10%), դ) պարզ նախդիրներով և նախդրավոր դարձվածքներով կազմված կառույցներով (6%), ե) պարզ և բարդ նախդրավոր կառույցներով (6%), աննախդիր կառույցներով ( 3%), (էջ 162):

Ատենախոսն այդպիսի վիճակագրություն է կատարում նաև հայերենի հոլովներով և նախդիրներով արտահայտվող իմաստների դեպքում՝ ցույց տալով հայերենի տասնչորս հոլովական իմաստների դրսևորման վիճակագրությունը իսպաներենում (էջ 171):

Սույն՝ ատենախոսությունը զգալի ներդրում է տիպաբանական լեզվաբանության բնագավառում. ատենախոսը, կիրառելով իմաստից արտահայտության պլանին անցնելու վերլուծության սկզբունքը, լեզվական իրողությունները մեկնաբանել է ձևի և իմաստի հարաբերակցության տեսակետից. մի եղանակ, որ կարելի է գործադրել ինչպես մեկ լեզվի նկարագրության, այնպես էլ տարբեր լեզուների զուգադրական քննության համատեքստում: Ատենախոսի քննության առարկան ու կատարված եզրակացությունները կարող են հստակ պատկերացում տալ շարահյուսական տարբեր կիրառություններում տարբեր լեզուների հոլովների արտահայտած իմաստների և այդ իմաստների հարաբերակցության ծավալների վերաբերյալ:



Աշխատանքի վերաբերյալ ունենք մեկ-երկու մասնակի նկատառում, որ կարող է օգնել ատենախոսին՝ աշխատանքը հետագայում լրամշակելիս և այն հրատարակության պատրաստելիս:

1. Ատենախոսը զուգադրվող լեզուների հոլովի քերականական կարգի իրացումները ներկայացրել է ազատ կապակցությունների մակարդակում, ինքնաշեն օրինակներով, մինչդեռ աշխատանքն առավելագույնս կշահեր, եթե հոլովների իմաստների դրսևորումները ներկայացվեին գեղարվեստական գրականությունից քաղված բնագրային օրինակներով. այդպիսով առավել հստակ կերևային հոլովական իմաստների արտահայտման լեզվական միջոցները նաև գեղարվեստական խոսքում:

2. Մեր երկրորդ դիտողությունը վերաբերում է ատենախոսության գիտական տերմինաբանությանը: Ատենախոսը հոլովների քերականական իմաստներն արտահայտելու գիտական տերմինների փոխարեն գործածում է հոլովական իմաստների նկարագրական սահմանումները, ինչպես՝ *սեռական հոլովի* համար նշում է՝ «գործողության կատարողի իմաստ, «փոխանակ՝ *ենթակայական սեռական*, «մասի իմաստ», փխ. *մասնական սեռական*, «նյութի իմաստ», փխ. *բաղկացության սեռական*, «գործողությունը կրողի իմաստ», փխ. հանգման անուղղակի խնդիր, «միջոցի իմաստ» (կապական կապակցությունների դեպքում), փխ. *միջոցի անուղղակի խնդիր* և այլն (էջ 71-93):

Տերմինագործածության հարցում ատենախոսն այդպես է վարվում մնացած հոլովների քերականական իմաստները ներկայացնելիս:

3. Հոլովների իմաստները ներկայացնելիս ատենախոսը կազմում է համապատասխան օրինակներ, որոնք գերազանցապես ճիշտ են, և դրանցով կարելի է մեկնաբանել բառաձևերի քերականական իմաստները: Վկայված բազմաթիվ օրինակների շարքում երբեմն հանդիպում են որոշ անճշտություններ, որոնց վրա հրավիրում ենք ատենախոսի ուշադրությունը:

Սեռական հոլովի իմաստներից է համարում «մարմնի մասեր» - *տղայի* ձեռքը (փխ. հատկացական սեռական), (76), «իրերի ծագման վայրը» - *Հնդկաստանի* խոտը (փխ. տեղի սեռական), «պարունակության առկա նյութ» - *քարի* շենք (փխ. բաղկացության սեռական)՝ (77), կամ՝ «Նախարարի ուղղությամբ անսպառ



սպառնալիքներ, էին լսվում (84) նախադասության սեռ. + կապ կառույցը դիտել է «ուղղության իմաստ» (փխ. վերաբերության անուղղակի խնդիր): «Հացից մի կտոր կերավ» (121) նախադասության հացից բառաձևը դիտել է «ամբողջի իմաստ» (փխ. մասնական ուղիղ խնդիր) և այլն:


Որոշ վրիպումներ նշված են աշխատանքի լուսանցքներում:

Միանգամայն հասկանալի է, որ մեր դիտարկումները կրում են մասնակի բնույթ. դրանք վերաբերում են մասնակի հարցերի և հոլովական որոշ իմաստների տված անհստակ մեկնաբանությունների, որոնք ամեննին չեն ստվերում իր ամբողջության մեջ հաջողված սույն ատենախոսության գիտական արժեքը և չեն նսեմացնում ատենախոսի աշխատանքի արդյունքները:

Մեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը, իսկ հրապարակված հոդվածները լիովին արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Այսպիսով, Նարինե Մելքոնյանի «Հայերենի հոլովական իմաստների համարժեքները իսպաներենում» թեմայով ատենախոսությունը ընդգրկած նյութի շրջանակներով, առաջադիր խնդիրները լուծելու գիտական խորությամբ, տեսական ու գործնական կարևոր նշանակություններով բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի՝ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջները, համապատասխանում է գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին՝ «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» ժ.02.02. մասնագիտությամբ, ուստի միջնորդում ենք Հր.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտում գործող ԲՈԿ-ի 019 մասնագիտական խորհրդի առջև՝ նրա հեղինակին շնորհելու բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, որին նա լիովին արժանի է:

Պաշտոնական ընդդիմախոս՝


 (Լ. Ա. Խաչատրյան)

Լ. Խաչատրյանի գործունեությանը հաստատում եմ.

ՀՊՄՀ գիտաբարձրություն

Մանկ. գիտ. թեկնածու Գրիգորյան՝



 (Մ. Բապիրյան)

18. 10. 2022.